ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին «20» դեկտեմբերի 201 թ No 3322-Ա

V2135 10, 00

№ 21 DEC 2018 ժամ

Կից Դեղի կարգավիճակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 18-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103187218 առ 18.12.2018թ. գրությունը և դեղի պարզեցված ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Գրանցել երաշխավորված թվով 2 դեղը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ.Մելիքյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշելով սույն հրամանի տրման օրը.

4) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

20.12.2018

X

VERIFIED OCSP 20.12.2018 14:36:51 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

21.12.18
ժ. 09³⁰

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ առողջապահության նախարարի
2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 3322 - Ա հրամանի

Պարզեցված ընթացակարգով կատարված փորձաքննության եզրակացության հավելված

| h/h | Առևտրային անվանումը | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | դեղաձևը | դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | արտադրող ֆիրման | արտադրող երկիրը | գրանցման հավաստագրի իրավատերը | բացթողման կարգը | եզրակացության համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Սալբուտամոլ 4մգ դեղահատեր | սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ) | դեղահատեր | 4մգ; (100/10x10/) բլիստերում | Ռեմեդիկա ՍՊԸ, Լիմասոլ Ինդուստրիալ Իստեյտ, Աhարնոն փ., 3056 Լիմասոլ | Կիպրոս | Ռեմեդիկա ՍՊԸ, Լիմասոլ Ինդուստրիալ Իստեյտ, Աhարնոն փ., 3056 Լիմասոլ, Կիպրոս | Դ | 18184 17.12.2018 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Կլավոմիդ 500մգ/125մգ թաղանթապատ դեղահատեր | ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) | դեղահատեր թաղանթապատ | 500մգ+125մգ; (20/2x10/) բլիստերում | Ռեմեդիկա ՍՊԸ, Ահարնոն փ., Լիմասոլ Ինդաստրիալ Իստեյտ, 3056 Լիմասոլ | Կիպրոս | Ռեմեդիկա ՍՊԸ, Ահարնոն փ., Լիմասոլ Ինդաստրիալ Իստեյտ, 3056 Լիմասոլ, Կիպրոս | Դ | 18185 17.12.2018 |